# ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

Ա· ՇՐՋԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ ԹԻՒ 3 1861 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1,

## ՀԱՄԱՌՕՏ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն տես թիւ 1 2)

Ձայներուն վրայ երեք բան կը նկատուի, Եղանակ, Ժամանակ, Հանգիստ. — Եղանակը ըստ երաժշտաց ամբողջ ձայներուն և կիսաձայներուն դասաւորումն է, և է՛ն է, որ կամ մարդկային ձայնիւ և կամ նուագարաններով կը կատարուի: Ժամանակին տեւողութիւնը կրնայ չափ սեպուիլ, ինչպէս երակին զարկը (նապըզին նեւթելը) որ գրեթէ անոր մէկ բան մի է և անկէ առնուած են չափերուն մի օրինակ երթալը. Չափերը ձեռքի շարժումով կըլլայ և երբ բաժնուին չորս մասերու պէտք է ձեռքը այս պէս զարնել. ա. վար որուն կըսենք 1/4 ժամնկ. բ. վեր. որուն կըսենք 2/4 ժամնկ գ. վար 3/4 ժամնկ դ. կըլլին ձեռքը վեր երթալը կըլլայ ամբողջ ժամնկ ինչպէս,



Շարունակելի··

Հ· Ղ· Չերչեան

## ՀԱՄԱՌՕՏ ԵՒՐՈՊԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն տես թիւ 2)

Հարկ չէ որ ամէն չափ մի և նոյն ձև խազ ունենայ, այլ կրնայ անոնց հաւասար արժէքը ունեցող ուրիշ ձևեր գործածուիլ ամէն մէկ չափին մէջ ինչպէս




միևնոյն չափին մէջ ալ կրնայ այլ և այլ ձև խազեր նաև գործածուիլ, միայն թէ ամէն չափին արժէքն իրարու հաւասար ըլլալու է ինչպէս




Ձայն հանած կամ լսած ատեններս կ'զգանք որ անոնցմէ ոմանք ճիշդ նման են իրարու միայն թէ իրարմէ բարձր կամ ցած են, ասոնցմէ իրարու հաւասար եղած երկու ձայներուն մէջ տեղի բոլոր միջոցը կը կոչուի ութնեակ, որովհետև ութը ձայներու կը բաժնուի, որոնց ամենէն ցածը կըսուի առաջին և բարձրը ութերորդ. Այս ութը ձայները ամենը մէկանց Սքալա կամ ; սանդուխ կը կոչուին որոնց հեռաւորութիւններ կամ միջոցներ ունին և միշտ այսպէս կ'համրուին ցածէն մինչև բարձր

**Ա · Բ · Գ · Դ · Ե · Զ · Է · Ը ·**

**Սքալան թուանշաններովն ու անուններովը ինչպէս :**




Շարունակելի··

## ՀԱՌԱՋԱՆՔ

խօսք

Ս · Գ · Գ · Փափազեանց





Սա տխուր վիճակ փառաւոր Ազգիս
Ինչ՝ արիւն արցունք կը հոսեցընէ
Նոր նոր լոյս տածող Հայոցս աչերէ ։
Ս'ա մեր անողորմ՝ բաղդին հարուածներ
Փ'անի սրտառուչ հառաչանքներով
Ամէն հոյ սրտերն , դող տան ու երեր ։
Ո՛վ Տէր , բաւ չէ՞ն ինչ որ մինչև ցարդ
Կրեցինք սուգ , ցաւ . աւար ու աւեր

Ո՛չ դու հաշտութեան ծիածան զուարթ ։
Մեր Սուրբ Հայրենեաց երկինք պարզեցեր
Եւ դեռ չըշընորհած զԱրեան Հայրենի .
Կը զըկես ըղձեղ Աստղէն Հայրենի ,
Մէկ սիրտ , մէկ ոգի , ամէնքս մէկ անուն .
Մէկ յոյս , մէկ հաւատք կըրող . մէկ արիւն
Մէկ ապագայի և սկնկալու ,
Ինչու չմիանանք 'ի մի յոգ սիրոյ ։

Մի ըղձող , Տէր . մի՛ պատժեր անաչառ
Կը ցուր քու շանթերդ բարկութեանդ աշխար
Զիրար սիրելու , օգնել իրարու
Կու խնդրեմք աւասիկ ուխտ Սուրբ 'ի սրտի
Եւ խաղաղութեանդ թող դայ հրեշտակ
Միութիւն և սէր պահել 'ի սիրտ մեր

26 Սեպտեմբեր 1861 .

# ՔԱՅՐԻԼ

Ր. ձև




ԽՕՍՔ

Գ. Չափրաստճեան





Հարութիւնեան

**ՏՆՕՐԷՆ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՔ**

Գ. Յ. Երանեան
Ն. Ս. Թաշճեան